ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2016-3-2-Ա

ք. Երևան 11.04.2016թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2016 թվականի ապրիլի 11-ի նիստում քննարկեց 2016 թվականի մարտի 11-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ Սեյվրգլասս ընկերության (3 Rue de la Gare, 60960 Feuquieres, France) «շիշ» (հայտ No20151060) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի եւ «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու եւ քննարկելու» կարգի 107-րդ կետի 3- րդ մասի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, եւ դրանով մակնշվող ապրանքների եւ (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման ՀՀ-ում նույնատիպ ապրանքների համար գրանցման հիման վրա պահպանվող («Մարասի» առեւտրի տուն ՍՊԸ, ք. Երեւան, Ամիրյան 20, բն. 1, AM, N-18678) ծավալային ապրանքային նշանի առկայության պատճառով: Կարգի 111-րդ կետի համաձայն ապրանքային նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճան նման, եթե այն ընդհանուր առմամբ զուգորդվում է դրա հետ (այսինքն մարդու (միջին սպառողի) մոտ առաջացնում է նույն պատկերի, բառի, գույների, դրանց համակցության, իմաստի ընկալման զգացողություն), չնայած առանձին տարբերությունների առկայությանը: Ընդ որում, նշանները համարվում են ընդհանուր առմամբ զուգորդվող, եթե տվյալ նշանների հիմնական տարրերը կամ մասը համընկնում կամ կատարված են այնպես, որ տեսնելով դրանցից մեկը, միջին սպառողի (այսուհետ՝ սպառող) մոտ առաջանում է պատկերացում մտապատկերված մեկ այլ նշանի մասին, որին ինքն արդեն առնչվել է (ճանաչում է, իրեն հայտնի է): Պետք է

հաշվի առնել, որ ապրանքային նշանների առանձին տարբերությունների առկայությունը, որոնք էական դեր չեն կատարում նշանի ընկալման համար, սովորաբար որոշվում է դրանց անմիջական համեմատության արդյունքում եւ միջին սպառողի համար, որպես կանոն, ընկալելի չեն ապրանքի ընտրության ժամանակ: Կարգի 121-րդ կետի 2-րդ, 122-րդ կետի 1-ին ենթակետերի համաձայն՝ ծավալային ապրանքային նշաններին նման են համարվում ծավալային ապրանքային նշանները, որոնց նմանությունը որոշվում է արտաքին տեսքով:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանի վկայագիր տալու մասին, քանի որ ներկայացված և հակադրված նշանները ունեն տարբերություններ, որոնցով պայմանավորված դրանք կարող են չհամարվել շփոթելու աստիճան նման և որոնք կարող են հիմք հանդիսանալ ներկայացված «շիշ» ապրանքային նշանը գրանցելու համար:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ որոշումը կայացնելիս ավելի խիստ մոտեցում են ցույց տվել և համաձայնվեց, որ ներկայացված ապրանքային նշանը կարելի է գրանցել:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքարկողի ներկայացուցիչ արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված «շիշ» (հայտ No20151060) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքն ամբողջությամբ բավարարել, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել, ապրանքային նշանը գրանցել և տալ գրանցման վկայագիր:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ